ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. մայիսի 18 թիվ 45 - Ա

ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 226-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի մարտի 7-ի N 24-Ա կարգադրության հիման վրա <<Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում իրականացված 2010-2012 թվականների համակարգի գնահատման և ֆինանսական աուդիտի արդյունքում կազմված վերջնական հաշվետվության արդյունքները և Գ. Գևորգյանի 2013 թվականի մայիսի 17-ի գրավոր բացատրությունը՝ **կարգադրում եմ.**

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Գրիշա Գևորգյանին հայտարարել խիստ նկատողություն:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ